ԸՆԴՀԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ՕՎՍԱՆՆԱ ՍԵՆԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ՝ «ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԺԲ – ԺԵ ԴԱՐԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ցավոք, դեռևս կան բնական ու հասարակական գիտությունները հակադրողներ և բնագիտական, այսպես կոչված հիմնարար կամ ֆունդամենտալ գիտություններին գերապատվություն տվողներ: Գիտատեխնիկական առաջընթացի և արհեստական բանականության մեր ժամանակներում թվում է՝ պիտի անտեսվեին ու մոռացության մատնվեին հայագիտությունն ու հայ մշակույթը, սակայն բարեբախտաբար այդպես չէ, և Օվսաննա Խաչատրյանի սույն ատենախոսությունն էլ հավաստում է, որ ոչ միայն չի նվազել կամ մարել հետաքրքրությունը հայոց հին և միջնադարյան գրականության հանդեպ, այլև հայագետներն ազգային այս արժեքներն ուսումնասիրելիս և արժևորելիս շատ կարևոր բացահայտումներ են արել, բայց և անելիքները նույնպես դեռ շատ են:

Գիտական աստիճանի ամեն հայցորդ իր աշխատությամբ նոր ու ծանրակշիռ խոսք պիտի ասի իր գիտաճյուղում, այն հարստացնի նոր նվաճումներով ու բացահայտումներով: Իհարկե, տարբեր են գիտությունների դոկտորին և թեկնածուին ներկայացվող պահանջները, բայց և այնպես, թեմայի արդիականությամբ, ուսումնասիրվող նյութի գիտական մեկնաբանությամբ՝ թեկնածուականը նույնպես պետք բավարարի որոշակի պահանջների ու գնահատման չափանիշների: Առաջ անցնելով ասենք, որ Օ. Խաչատրյանի ատենախոսությունը իր գիտական արժանիքներով բավարարում է նման աշխատանքներին ներկայացվող չափանիշներն ու պահանջները, և հիմնավորենք, թե ինչու և ինչպես:

Գրականագիտական հստակ մտածողությունը նրա գլխավոր առավելությունն է, որով ձևակերպվել են նրա ոչ միայն հարցադրումները, այլև ատենախոսության

գլուխների վերնագրերը և գրագետ շարադրանքն առհասարակ: Սկսենք այն հիմնախնդրից, թե ինչպե՛ս է հիմնավորված սույն թեմայով ատենախոսություն գրելու անհրաժեշտությունը, ինչպե՛ս է ներկայացրել հարցի պատմությունը, որ գիտական թեմայի մշակվածության աստիճանի ցուցադրումն է, և որո՛նք են հեղինակի ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները: Հենց սրանով էլ կպարզվի ատենախոսության գիտական նորույթը՝ այն, թե ի՛նչ է հավելում հայցորդը նախորդների վաստակին և ի՛նչ նոր խոսք է ասում հեղինակը բանասիրական գիտության մեջ:

Այս հարցադրումները հայցորդից պահանջել են նախ՝ լրջագույն պատասխանատվություն թե՛ ուսումնասիրվող նյութի, թե՛ նախորդների վաստակի արժևորման և թե՛ սեփական աշխատության գիտականության հանդեպ: Թերևս այս գիտակցությունն ու փորձառու, հմուտ ղեկավարի ուղղորդումներն են պարտավորեցրել հեղինակին բարեխղճորեն ուսումնասիրելու Մաշտոցյան Մատենադարանում պահվող՝ թեմային առնչվող շուրջ 400 տարվա բազմաթիվ նյութեր՝ շուրջ հինգ տասնյակ անտիպ ձեռագրեր և թեմային առնչվող մոտ 200 միավոր մասնագիտական գրականություն, որն օգտագործվել է արտակարգ բարեխղճությամբ, բոլոր քաղվածքների աղբյուրների ճշգրիտ նշումներով:

Ցանկալի արդյունքը մեր քննարկմանը ներկայացված ատենախոսությունն է՝ գիտական խոսքին բնորոշ կուռ կառույցով՝ ներածություն, չորս գլուխներ՝ յուրաքանչյուրը երկու կամ ավելի ենթագլուխներով, ուսումնասիրության վերջնարդյունքներն ամփոփող գիտական եզրահանգումներ և օգտագործած գրականության ցանկ: Ծավալը՝ 143 էջ:

Պահանջվող կարգի համաձայն՝ հայցորդը ներածության մեջ հիմնավորել է թեման, ներկայացրել նրա մշակվածության աստիճանը, հստակորեն ձևակերպել իր անելիքները՝ ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները՝ դրանք ձևակերպելով ութ կետերով: Այն հիմնախնդիրները, որ հայցորդը դրել է իր առջև, աշխատության էջերում ստացել են հիմնավոր լուծումներ, որոնք ընդլայնում են գիտական պատկերացումները միջնադարի մի կարևոր հատվածում՝ 12-15-րդ

դարերում հայ գրականության մեջ գործածված գրական բազմազան ժանրերի մասին:

Քննարկվող չորսհարյուրամյա ժամանակահատվածը մեր ընդհանուր փիլիսոփայական, կրոնական, գիտական և գեղարվեստական մտքի դիտանկյունից հետաքրքիր է նաև նրանով, որ ձեռագրական - գրչագրական արվեստի ծաղկման դարաշրջան էր, հոգևորի ընդերքում շարունակում էր զորեղանալ արդեն նախընթաց ժամանակներում արմատավորված աշխարհիկ մտածողությունը և նվաճում նորանոր կենսատարածքներ: Այս երևույթը ներազդում էր իրականության բոլոր ոլորտների, հոգեմտավոր մշակույթի և առաջին հերթին՝ գրականության ու գրական ժանրերի վրա: Հոգու և մարմնի պայքարը շարունակվում էր, և պատահական չէ, որ այս ժամանակներում միևնույն հեղինակը կարող էր գրել և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ թեմաներով ու ժանրերով ստեղծագործություններ, երբեմն էլ հոգևոր ստեղծագործության մեջ այլաբանորեն հյուսում էր աշխարհիկ կյանքի պատկերներ: Ինքնարտահայտման հնարավորությունների ընդլայնման պահանջը գրողին, արվեստագետին թելադրում էր գործածել ոչ միայն ընդունված կենսունակ ու կաղապարային ժանրաձևերը, այլև ստեղծել նորերը: Սա էլ իր հետ բերում էր ժանրային համակարգի հարստություն ու բազնազանություն: Սույն ատենախոսության էջերում համապատասխան օրինակներ շատ կան, որոնց մենք անխուսափելիորեն կհանդիպենք, սակայն աշխատության գիտական նորույթն այն է, որ նրա էջերում հեղինակը, հենվելով նույն թեման ուսումնասիրած նախորդ բանասերների փորձի վրա, շրջանառում է քիչ ուսումնասիրված մի մեծ ժամանակահատվածի ձեռագրական առատ նյութը՝ անբավ մի հարստություն, և գիտական համակարգումով համակողմանիորեն դիտարկում է ինչպես հնից եկող գրական հաճախադեպ գործածված, այնպես էլ նոր առաջացած գրական ժանրատեսակները: Վերջինները ժամանակի և կենսական հանգամանքների թելադրանքով ստեղծվում էին կենսական նոր իրողությունների գեղարվեստականացման պահանջով և ունեին իրականության արտացոլման ու պատկերավորման-արտահայտչական նոր հնարավորություններ:

Ի պատիվ հայցորդի պետք է նշել, որ նա, գրաբարի ու միջին հայերենի կատարյալ տիրապետումով, ոչ միայն սեփական ընթերցումով բուն նյութը՝ թեմային առնչվող ձեռագրական հարուստ ժառանգությունն է ուսումնասիրել: Նա նաև ճիշտ է կողմնորոշվել կողք կողքի և հաճախ ընդելուզված ու փոխներթափանցված հոգևորի ու աշխարհիկի բարդ խնդիրներում, զուգորդված և առնչակից գրական ժանրերի բնութագրումներում և իր իսկ առաջադրած գիտական հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցերին տվել է տրամաբանական համոզիչ պատասխաններ:

Առանց մանրամասների մեջ խորանալու՝ փորձենք ընդհանուր գծերով բնութագրել ատենախոսության հայագիտական արժեքը: Սկսենք նրանից, որ ատենախոսության գլուխներն ու ենթագլուխները հստակ ձևակերպված վերնագրեր ունեն, որոնք հայցորդի գիտական հասունության արտահայտություն են: Այսպես, խոսուն է առաջին գլխի վերնագիրը՝ «Հանելուկը և կաֆան որպես ձեռագրական յուրահատուկ դրսևորումներ ունեցող ժանրեր ԺԲ – ԺԵ դարերի ձեռագրերում»: Նրա երկու ենթագլուխներում հեղինակը քննում է ձեռագրերում լայնորեն կիրառված երկու ժանրեր՝ հանելուկը և կաֆան ու նրանց դրսևորումները «Հայսմավուրք» և «Գանձարան» ժողովածուներում: Առաջին անգամ համադրաբար քննելով այդ ժանրերը՝ հայցորդը նկատել է հանելուկների և վարքագրության առնչակցությունները «Հայսմավուրքներում», կաֆաների ու գանձերի առնչակցության դրսևորումները՝ «Գանձարաներում»: Այս գլխում արժանավորապես գնահատվում են Գրիգոր Ծերենց Իսլաթեցու գործունեությունն ու նրա խմբագրած «Հայսմավուրքը»:

Առանձնապես ուշագրավ է հայցորդի այն դիտարկումը, թե վարքին հաջորդող հանելուկը նպատակ ուներ առավել ընկալելի և տպավորիչ դարձնելու նախորդը: Ավելին. Գր. Իսլաթեցին պետք է համարվի «Հայսմավուրքներում» վարքագրությունից հետո հանելուկ ներառելու ավանդույթի սկզբնավորող: Համոզիչ է բերված՝ Եփրեմ Խուրի Ասորու վարքին հաջորդող հանելուկի օրինակը, որը

վերջինիս արտաքինի և ազգային պատկանելության գեղարվեստական բացահայտումն է:

Ատենախոսության լուրջ արժանիքներից մեկն էլ նա է, որ այս կամ այն հիմնավորում-նախադրյալներին հաջորդող ուշարժան եզրահանգումը հայցորդն ընդգծում է՝ ավելի տեսանելի դարձնելով այն: Այդպես է, օրինակ, թե՛ ատենախոսության մեջ և թե՛ սեղմագրում հետևյալ ընդգծված միտքը. **«Հայսմավուրքներում օբյեկտիվն՝ էպիկական – պատմողականը ու գեղարվեստականը (այլաբանականը) հանդես են եկել միաժամանակ, բայց ոչ միաձույլ»:** Ապա այս ընդգծվածին հաջորդում է սովորական շարվածքով մեկնաբանությունը: Ասելիքի կարևորության գիտակցությամբ՝ այսպես հաճախ է նա իր որոշ բնութագրումներն ու եզրահանգումներն արտահայտում շեշտված ընդգծումով՝ երբեմն ամբողջ միտքը, երբեմն էլ նախադասության այն իմաստակիր հատվածը, բառակապակցությունը կամ բառը, որի վրա կամեցել է հատուկ ուշադրություն հրավիրել (տե՛ս Ատենախոսություն, էջք 20, 21, 25,45, 61 և այլն) :

Գնահատելի է և հայցորդի համարձակ բնորոշումը՝ տրված Գանձարաններին և նրանցում տեղ գտած «գանձարանային կաֆաներին» ու գանձերին ու մանավանդ նշանավոր գանձասացներ Առաքել Բաղիշեցուն, Սիմոն Գանձասացին, Կարապետ Բաղիշեցուն և այլն: 10-րդ դարում Նարեկացու սկզբնավորած և հետագայում զորձածված գանձերի ժանրային յուրահատկությունների քննության ընթացքում էլ հայցորդը նկատել է ծայրակապի (ակրոստիքոսի) դրսևորումները և բերել համապատասխան օրինակներ, որոնցում շղատառով մատնացույց է արել գաղտնագրված անունը կամ արտահայտությունը:

Երկրորդ գլուխն իր երկու ենթագլուխներով՝ նվիրված է ուսումնասիրվող ժամա-նակաշրջանում ձեռագրի հիշատակարանի՝ որպես գրական ժանրի, քննությանը: Համակարգելով հիշատակարանի ժանրը իր բոլոր տարատեսակներով՝ հայցորդը ցույց է տվել դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Միջնադարի տքնաջան գրիչները, որոնք ուրույն մտածելակերպով սովորաբար «հանձնարարեն» ինքնաբնութագրվել են նվաստացուցիչ մակդիրներով՝ անարժան,

ապիկար, ծույլ, փծուն և այլն, ձեռագրի հետ միասին ավանդել են նաև մի քանի տողից մինչև մի քանի էջ ծավալով արձակ կամ չափածո բազմաձև ու բազմաբովանդակ հիշատակարաններ (գրչի, ընդօրինակողի, ծաղկողի, սրբագրիչի), որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում հեղինակի, պատվիրատուի, ընօրինակողի, գրության ժամանակի և շարժառիթի, հասցեատիրոջ, այս կամ այն իրադարձության և այլնի մասին: Այս ժանրը իր տարատեսակներով սկզբնավորվել է 5-րդ դարից և իր զարգացման բարձրակետին է հասել ուսումնասիրվող դարերում: Այստեղ էլ հայցորդը դրսևորել է տարբեր ձեռագրերում ցրված գրական առատ նյութը համակարգված ներկայացնելու, գիտական հայացքով քննելու, ժանրաձևերը տարբերակելու և նրանց յուրահատկությունները մատնանշելու իր նախասիրությունը, որը նույնպես, ատենախոսության մյուս գլուխների նման, հայցորդի՝ ինքնուրույն գիտական աշխատանք կատարելու ցուցանիշներից է:

Ատենախոսի գիտավերլուծական կարողությունները ցայտունորեն դրսևորվել են նաև երրորդ գլխում, որը վերնագրված է «Գրառաջքի գրական տեսակը՝ որպես միջնադարյան գրականության ժանր»: Նախ տրվում է գրառաջքի՝ որպես գրական ժանրաձևի, ծագման և էության բացատրությունը և ապա երեք ենթագլուխներում նրա գործածությունը 13-րդ դարից՝ Հովհաննես Երզնկացուց սկսած:

Փոքրածավալ չափածո, հիմնականում՝ արձակ, ինքնուրույն կիրառություն չունեցող այդ ժանրատեսակն ստեղծվել է որպես հանրության առավել հայտնի անձերին՝ թագավորին, կաթողիկոսին, զորավարին, քահանային (գերազանցապես՝ հոգևորականներին, որոնք բնորոշվել են մեծարման յուրահատուկ մակդրային բառապաշարով) և այլ անձանց ուղղված բուն ստեղծագործությանը՝ կոնդակին, նամակին, թղթին, հրովարտակին նախորդող երկ՝ նախերգանքի, ձոներգի, ընծայագրի տեսքով: Միջնադարում այն գործածվել է, հայցորդի դիպուկ բնորոշմամբ, որպես ոչ ինքնուրույն, կախյալ ժանր՝ հիշատակարանին առնչակից: Ա. Դոլուխանյանից հետո այս ժանրաձևի բնութագրման, գործառական կիրառության ավելի համակողմանի ու հանգամանալից մեկնություն հազիվ թե հանդիպի: Ավելին. պետք է ընդգծենք, որ գիտական բարեխղճությունը հայցորդին չի

պարփակել միայն իր ուսումնասիրության ժամանակային տիրույթում, և նա ժանրի զարգացման ընթացքին հետևել է մինչև 17-րդ դար՝ մատնանշելով ժանրի կրած փոփոխությունները դարավոր զարգացման ընթացքում:

Բարեբախտություն է, որ ատենախոսության գլուխները մեկը մեկից հետաքրքիր են, և չորրորդ գլուխը՝ երեք ենթագլուխներով, բացառություն չէ: Այստեղ ընդհանուր գծերով բնութագրվում են 12-15-րդ դարերի ձեռագիր մատյաններում հանդիպող տարբեր ժանրեր՝ պատմագրություն, վարքագրություն ու վկայաբանություն, թղթեր, ներբողներ, տաղեր (հեղինակի հստակ բնութագրումով, քանի որ դեռևս տաղն ու խաղը շփոթողներ կան), շարականներ, 54 ձեռագրերում առկա՝ Նարեկացու հռչակավոր «Մատյան ողբերգության» երկը (ի դեպ, լիովին համամիտ ենք այս երկի ժանրին ու գեղարվեստական բացառիկ արժեքին հայցորդի կողմից տրված աննախապաշար գնահատականին): Ձեռագիր մատյաններում գործածված բոլոր ժանրերն ստացել են ընդունելի դիպուկ բնութագրումներ, որոնք դարձյալ խոսում են աշխատանքի գիտականության և հայցորդի օգտին, որն իր խոսքը հիմնավորել է նախորդ միջնադարագետների՝ Ղ. Ալիշանի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Ս. Հարությունյանի, Մ. Ավդալբեկյանի Լ. Խաչիկյանի, Ա. Մաթևոսյանի և այլոց աշխատությունների տեղին վկայակոչումներով:

Գուցե զարմանալի թվա, որ պաշտոնական ընդդիմախոսը ատենախոսության մեջ թերություններ չի մատնանշում. լինեին՝ կնշեինք: Մանր-մունր մի երկու տեխնիկական կամ այլ բնույթի վրիպումը մատնանշելու արժանի թերություն չէ.այդպիսիները բարեխիղճ հեղինակն ինքը աշխատանքը հրատարակելիս կշտկի:

Ամփոփենք: Օվսաննա Խաչատրյանն այս աշխատանքում ձեռագրական հարուստ նյութին և նախորդների վաստակին ցուցաբերել է գիտաքննական մոտեցում: Նա հաջողությամբ է լուծել իր առջև դրված բոլոր խնդիրներն ու նպատակները և հրապարակային պաշտպանության է ներկայացրել գիտական անուրանալի արժանիքներով օժտված ատենախոսություն, որով հարստանում է հայ միջնադարագիտությունը:

Հեղինակի խոսքը կառուցիկ է, ոճը՝ գիտական, ուսումնասիրության արդյունքներն ամփոփող եզրահանգումները՝ տրամաբանական ու համոզիչ: Ատենախոսությունը լիուլի բավարարում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջները, ունի գիտագործնական որոշակի արժեք և օգտակար կլինի հայ գրականության պատմության և տեսության հարցերով զբաղվողներին:

Այս հիմքով էլ միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդին՝ «Միջնադարյան գրական ժանրերը Մաշտոցի անվան Մատենադարանի ԺԲ – ԺԵ դարերի ձեռագիր մատյաններում» ատենախոսության համար Օվսաննա Սենիկի Խաչատրյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա միանգամայն արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԱՅԱՄՊԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի

անվան հայ գրականության պատմության և

գրականության

տեսության ամբիոնի պատվավոր վարիչ,

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Արշ. Մ. ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան,

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

07. 02. 2025